Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

ԸՆԴԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԼՐԱԹԵՐԹ

ՀՈՒՆՎԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա

Երևան, 2021

Սիրելի ընթերցող,

2020 թ. առավել մարտահրավերային էր Հայաստանի համար՝ պայմանավորված համավարակով, պատերազմով և հետպատերազմյան զարգացումներով:

Ճգնաժամերն, անխոս, ազդում են հասարակության բոլոր անդամների և խմբերի վրա, բայց ոչ միանման կերպով:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում համավարակը նպաստեց ընտանեկան բռնությունների դեպքերի աճին, էապես ազդեց կանանց սոցիալական և տնտեսական անվտանգության վրա:

Պատերազմի հետևանքով հարյուրավոր կանայք և երեխաներ առերեսվեցին տեղահանման, ֆիզիկական և հոգեկան առողջության խաթարման և ահռելի մարդկային կորուստների հետ:

Առկա ճգնաժամերի պայմաններում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան (ԸԿՆԲԿ)՝ իբրև 11 հասարակական կազմակերպությունների՝ կանանց հանդեպ բռնության և խտրականության դեմ միասնական պայքարի հարթակ, փորձել է անել առավելագույնը՝ ամուր կանգնելով հայաստանաբնակ և արցախաբնակ կանանց կողքին:

Տարվա կտրվածքով ճգնաժամային ֆոնդահայթայթման և անդամ կազմակերպությունների խնայողությունների շնորհիվ մենք ապահովել ենք հումանիտար արձագանքում, տրամադրել նյութական, սոցիալ-հոգեբանական, իրավաբանական աջակցություն մեր շահառուներին: Անդամ կազմակերպությունների աշխատանքներն ուղղված են եղել հնարավորինս երաշխավորելու կանանց և երեխաների ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունն ու արժանապատիվ կացությունը համավարակի և պատերազմի պայմաններում:

Միևնույն ժամանակ ԸԿՆԲԿ-ն հետևողական է եղել գենդերային բռնության դեմ ուղղված իր աշխատանքներում. մենք իրականացրել ենք փաստահենք ադվոկացիա, բարձրաձայնել կանանց հանդեպ ճնշումների, խտրականության և սեքսիզմի դրսևորման դեպքերը, աշխատել պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ Հայաստանում գենդերային բռնության և խտրականության կանխարգելման համար անհրաժեշտ կառուցակարգերի զարգացման և իրավական երաշխիքների ամրապնդման ուղղությամբ:

ԱՅՍ ԼՐԱԹԵՐԹՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ

Տարվա մեկնարկը. կնասպանության դեմ կանանց քայլերթը Գյումրիում 3

Արձագանք Կովիդ 19-ով պայմանավորված համավարակին 6

Ընթացիկ աշխատանքներ 10

Ռազմավարական դատավարություն. Թագուհի Մանսուրյանի գործով դատավարության ավարտ 10

Վերապատրաստումներ 11

Հայտարարություններ, դիրքորոշումներ 12

Հանրային իրազեկում 12

Գենդերային բռնության դեմ պայքարի կառուցակարգերի զարգացմանն ու օրենսդրական մեխանիզմների արդյունավետության խթանմանն ուղղված աշխատանքներ 14

ԸԿՆԲԿ-ի անդամ կառույցների կարողությունների զարգացմանն ուղղված քայլեր 15

Արձագանքելով Արցախյան երկրորդ պատերազմին 17

2020 թ.-ի առանցքային համագործակցությունները 19

ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ. ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿԱՆԱՆՑ ՔԱՅԼԵՐԹԸ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

[մարտ]

2020 թ. մարտի 4-ին Գյումրիում արձանագրվեց կնասպանության դեպք. զուգընկերոջ կողմից ժամեր շարունակ դաժան ծեծի ենթարկվելով՝ Մարինեն մահացավ: Տարվա սկզբից սա Հայաստանում կնասպանության 5-րդ դեպքն էր[1]:

Մարինեի սպանության շուրջ հասարակության արձագանքներում գերակշռող էր կնոջ կրկնակի զոհականացումը. մեղադրանքների թիրախում կրկին ևս բռնության ենթարկված կինն էր և ոչ բռնարարը:

Մարտի 9-ին Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի, իրավապաշտպանների, ակտիվիստական և ֆեմինիստական շրջանակների նախաձեռնությամբ տասնյակ կանայք Գյումրիում բողոքի երթ անցկացրին:

«Կանայք սպանվում են ձեր լռության պատճառով», «Կանայք սպանվում են ընտանիքներում», «Ո՛չ բռնությանը» գրառումներով պաստառներով ակցիայի մասնակիցները Գյումրիի կենտրոնական հրապարակից քայլերթով հասան դեպի դատախազության շենք, իսկ այնուհետ սպանված կնոջ բնակության վայր[2]:

«Բոլորս հավաքվել ենք, որպեսզի մերժենք բռնությունը, մերժենք լռությունն ու հասարակության կողմից անտարբերությունը: Նաև ուզում ենք հասարակությանն իրազեկել, որ կանայք մեղավոր չեն, ու չպետք է լռեն: Ամեն ինչ անելու ենք, որ կնասպանության, բռնության դեպքերը նվազեն: Մարինեի՝ 43-ամյա կնոջ մահվան դեպքը որակվել է անզգուշությամբ մահ հասցնել, հետևաբար մենք հետամուտ ենք լինելու, որ հնարավորինս ծանր պատիժ լինի»,- երթի ընթացքում՝ լրագրողների հետ զրույցում շեշտեց ԸԿՆԲԿ-ի անդամ, Գյումրի քաղաքում գործող «Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Դավթյանը:

1 Դեպքի մանրամասները՝ «Sputnik Արմենիա» լրատվականի նյութում, https://armeniasputnik.am/incidents/20200305/22282074/gyumri-um-haytnabervele-43-amya-knoj-cecvac-din.html:
2 Բողոքի երթի լուսաբանումը՝ «Epress.am» լրատվականի կողմից, https://epress.am/2020/03/09/2215.html:

Կնասպանության այս դեպքը մեծ արձագանք ստացավ նաև պետական կառույցների կողմից: Մարինեի սպանությունը մեկ անգամ ևս ի ցույց դրեց կանանց և աղջիկներին բռնությունից պաշտպանելու և կնասպանության դեպքերը կանխարգելելու պարտավորությունը կրող պետական բոլոր օղակների ձախողումը:

ԸԿՆԲԿ-ի՝ ՀՀ ոստիկանությանն ուղղված պաշտոնական հարցման տվյալների համաձայն՝

ՀՀ ոստիկանությունը 2020 թվականին քննել է ընտանեկան բռնության 540 դեպք,

540 դեպք

իսկ նույն ժամանակահատվածում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանիքում կանանց սպանության 5 դեպք,

5 դեպք

որից ամուսնու կողմից կնոջ սպանության 1 դեպք,
որդու կողմից մոր սպանության 3 դեպք
և փեսայի կողմից զոքանչի սպանության 1 դեպք:

Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ ոստիկանության կողմից գրանցված դեպքերը վերաբերում են կանանց այն սպանություններին, որոնք կատարվել են ընտանիքի անդամների կողմից (ամուսին, զավակ, փեսա և այլն): Այսպիսով՝ պաշտոնական վիճակագրությունից դուրս են մնում կնասպանությունների այն դեպքերը, որոնք կատարվում են, օրինակ, ներկայիս կամ նախկին զուգընկերների կողմից, ինչպես Մարինեի դեպքում էր:

ԸԿՆԲԿ-ն և անդամ կազմակերպությունները իրենց կողմից իրականացվող մշտադիտարկման շրջանակում հիմք են ընդունում «Կնասպանության մասին» Վիեննայի հռչակագիրը (2012 թ.)[3], որը ճանաչում է կնասպանությունն իբրև գենդերային հիմքով բռնություն՝ ամրագրելով դրա դրսևորման առավել ընդգրկուն շրջանակ:

Ըստ այդմ, ԸԿՆԲԿ-ի անդամ կազմակերպությունների հավաքած տվյալների համաձայն՝

2020 թ.-ին տեղի է ունեցել կնասպանության 12 դեպք,

ինչը ավելի քան երկու անգամ գերազանցում է պաշտոնական վիճակագրության մեջ արտացոլվող կնասպանության դեպքերի քանակը:

12 դեպք

3 Հռչակագրին կարող եք ծանոթանալ այստեղ՝ http://femicide-watch.org/products/vienna-declaration-femicide-2012-acuns-vienna:

ԱՐՁԱԳԱՆՔ ԿՈՎԻԴ 19-ՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՎԱՐԱԿԻՆ

[մարտ-նոյեմբեր]

Կովիդ 19-ով պայմանավորված համավարակը բացասաբար ազդեց կանանց ֆիզիկական, հոգեկան և սոցիալական անվտանգության վրա թե՛ ամբողջ աշխարհում, և թե՛ Հայաստանում:

Համավարակը նաև ակամայից փոփոխեց 2020 թ.-ի ԸԿՆԲԿ-ի պլանները. մենք ստիպված էինք չեղարկել Կոալիցիայի 10-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները, դատական մշտադիտարկումները, մի շարք հանրային ակցիաներ և ադվոկացիոն գործողություններ, ինչպես նաև ընթացիկ ծրագրեր՝ **առկա ռեսուրսները ճգնաժամային իրավիճակում հայտնված կանանց և աղջիկների աջակցությանն ուղղելու և արագ արձագանքում կազմակերպելու նպատակով:**

2020 թ. մայիսին ԸԿՆԲԿ-ն ներկայացրեց արտակարգ դրության պայմաններում ընտանեկան բռնության ահազանգերի աճի առնչությամբ զեկույց, ըստ որի՝

փետրվար-մարտ ամիսների ընթացքում ԸԿՆԲԿ-ի անդամ կազմակերպությունների թեժ գծերի հեռախոսազանգերն աճել են 50%-ով:



Բռնության ահազանգերից զատ՝ բազմաթիվ կանայք մեզ դիմել են նաև սոցիալական և հոգեբանական աջակցության խնդրանքով:

Հայաստանում համավարակով պայմանավորված արտակարգ դրության հաստատումից ի վեր ԸԿՆԲԿ-ն ու անդամ կազմակերպությունները փորձել են հնարավորինս արագ և արդյունավետ ադապտացվել ստեղծված իրադրությանը:

ԸԿՆԲԿ-ն իրականացրել է ճգնաժամային ֆոնդահայթայթում, կարճ ժամանակում ապահովել է ռեսուրսների մոբիլիզացում, անդամ կազմակերպությունները արել են հնարավորինս՝ երաշխավորելու, որ կանայք և ընտանիքները, որոնց հետ մենք աշխատում ենք, ստիպված չլինեն միայնակ առերեսվելու համավարակի և արտակարգ դրության պայմաններում ի հայտ եկած դժվարություններին:

Արագ արձագանքման շրջանակում ԸԿՆԲԿ-ի ուշադրության և ջանքերի կենտրոնում են եղել ընտանեկան, սեռական և գենդերային բռնություն վերապրած կանայք, հոգեսոցիալական առողջության խնդիրներ ունեցող կանայք, ԼԲՏ կանայք, ՄԻԱՎ-ով ապրող կանայք, գյուղաբնակ կանայք: **Աջակցությունը տրամադրվել է կոմունալ վճարների փոխհատուցման, տնտեսական փաթեթների, սանիտարական անհրաժեշտ պարագաների, ինչպես նաև հոգեբանների, սոցիալական աշխատողների և իրավաբանների անվճար ծառայությունների տրամադրման տեսքով:**

ԸԿՆԲԿ-ն և անդամ կազմակերպությունները շվեդական Քվիննա թիլ Քվիննա հիմնադրամի հետ համագործակցության շնորհիվ

կարողացել են աջակցություն տրամադրել ընտանեկան բռնությունից և գենդերային բռնությունից տուժած 1399 կնոջ:

1399 կին

Մասնավորապես ՝

- Սեռական և գենդերային բռնություն վերապրած 27 կնոջ տրամադրվել է նյութաֆինանսական աջակցություն՝ ձեռնարկատիրական գործունեություն սկսելու և սեփական եկամտի աղբյուր ստեղծելու ուղղությամբ:
- 77 կնոջ ցուցաբերվել է աջակցություն՝ կոմունալ վճարների փոխհատուցման տեսքով:
- 139 կնոջ տրամադրվել են տնտեսական փաթեթներ:
- Շուրջ 1260 կնոջ տրամադրվել են դիմակներ, պաշտպանիչ և սանիտարահիգենիկ միջոցներ:

27 կին

77 կին

139 կին

1260 կին

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի օգնությամբ Կոալիցիային հաջողվեց

ճգնաժամային աջակցման փաթեթներ տրամադրել 157 շահառու կանանց՝ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերից և Երևանից, ինչպես նաև պաշտպանական դիմակներ, ձեռնոցներ ու այլ կանխարգելիչ միջոցներ 450 շահառու կանանց:

157 կին

450 կին

ECO
Pampers
active baby
Pampers
active baby
Huggies

UNFPA
UNFPA
UNFPA
UNFPA

Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի աջակցությամբ Կոալիցիայի անդամ կազմակերպություն «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ին տրամադրվել է ենթադրամաշնորհ, որի նպատակն էր Կովիդ-19-ով պայմանավորված ճգնաժամը հաղթահարելու համար դրամական աջակցություն ցուցաբերել ընտանեկան բռնություն վերապրած 8 կնոջ (15 երեխա), որոնք համավարակի սահմանափակումների պատճառով գործազուրկ էին և չէին կարողանում հոգալ իրենց ֆինանսական ծախսերը: Այդ շահառուները ֆինանսի կարիք ունեին կոմունալ վճարումներ կատարելու, ինչպես նաև սննդի և հիգիենայի պարագաների համար:

Եվրոպական միության(ԵՄ) աջակցությամբ ԸԿՆԲԿ-ի անդամ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն տարվա կտրվածքով ապահովել է

24/7 թեժ գիծ ծառայություն, որի շնորհիվ 65 կին ստացել է իրենց սոցիալական իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավաբանական անվճար խորհրդատվություն:

65 կին

Բացի դրանից՝ ԸԿՆԲԿ-ի անդամ «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը ենթադրամաշնորհային աջակցություն է տրամադրել մարզային 13 կազմակերպության՝ տեղակայված ՀՀ բոլոր մարզերում, Կովիդ-19 համավարակի դեմ պայքարում միասնական արձագանքման և ուղղորդման ցանց ստեղծելու նպատակով: Աջակցության շնորհիվ ենթադրամաշնորհային 14 ծրագրեր ուղղվեցին գենդերային բռնություն վերապրած և համավարակի արդյունքում սոցիալ-տնտեսական վատթարացած պայմաններում հայտնված կանանց, մեկ ենթադրամաշնորհային ծրագիր ուղղվեց բռնություն վերապրած անձանց տնտեսական զորեղացմանն ու տրավմայից վերականգնմանը:

Ընդհանուր առմամբ տրամադրվել է 10.500 եվրոյին համարժեք ՀՀ դրամի ենթադրամաշնորհ, որի շնորհիվ տվյալ նախաձեռնության շրջանակներում հնարավոր դարձավ ուղղակիորեն աջակցել 287 կնոջ և 43 երեխայի:

287 կին

43 երեխա

Համավարակին արձագանքման շրջանակում կանանց և նրանց ընտանիքների հետ մեր աշխատանքն ապացուցեց աջակցման համալիր ծրագրերի անհրաժեշտությունը և այսօրինակ պետական ծրագրերի և միջամտությունների անբավարարությունը:

Ռազմավարական դատավարություն.
Թագուհի Մանսուրյանի գործով դատավարության ավարտ

[դեկտեմբեր]

2020 թ.-ի դեկտեմբերի 2-ին կայացվեց Թագուհի Մանսուրյանի՝ նախկին ամուսնու կողմից կացնահարման գործով վճիռը: Ավելի քան երեք տարի տևողությամբ դատավարությունն ավարտվեց բռնարարի՝ 19 տարվա ազատազրկմամբ[4]:





Թագուհի Մանսուրյանը՝ «Դափնե» նախագծի համար հարցազրույցում[5]

«Տարիներ շարունակ դատական համակարգում եղել են բազմաթիվ անտրամաբանական վճիռներ, և բռնարարները երբեմն կնասպանության դեպքում անգամ դատապարտվել են ընդամենը 3,5 տարվա ազատազրկման: Այս դատավճռով կարծես թե բեկում արձանագրվեց և մենք լիահույս ենք, որ դատավճիռը շարունակական կդարձնի կանանց նկատմամբ բոլոր տեսակի բռնությունների միանշանակ դատապարտումը թե՛ իրավական, թե՛ հասարակական մակարդակներում», - նշել է ԸԿՆԲԿ-ն դատավճռի կապակցությամբ[6]:

4 Գործի մանրամասների մասին՝ «MediaLab» լրատվականի լուսաբանումը, https://medialab.am/114925/:
5 Թագուհի Մանսուրյանի հարցազրույցը «Դափնե» նախագծին, https://daphnearmenia.com/2019/01/31/taguhiarm/:
6 Գրառումը՝ «Epress.am» լրատվականի կողմից պատրաստած նյութի շրջանակներում, https://epress.am/2020/12/03/2138-2.html:

ԸԿՆԲԿ-ի կողմից գործով ընթացող ռազմավարական դատավարության լուսաբանումը, մշտական ներկայությունը դատական նիստերին, անկասկած, մեծապես նպաստեց գործի արդար քննությանն ու արդարության վերականգնմանը:

Առկա դատավճիռը իրապես մեծ առաջընթաց է Հայաստանում գենդերային բռնության և կնասպանության դեպքերի կանխարգելման ուղղությամբ:

Վերապատրաստումներ

[սեպտեմբեր-նոյեմբեր]

2020 թ.-ին մարզային 10 հասարակական կազմակերպություն ստացել է դրամաշնորհներ կառավարությունից՝ ընտանեկան բռնությունից տուժած անձանց ծառայությունների մատուցման նպատակով՝ այսպիսով ստանձնելով Աջակցության կենտրոնների գործառույթներ: Պետության կողմից ընտրված բոլոր հասարակական կազմակերպությունների վերապատրաստումներն իրականացվել է ԸԿՆԲԿ-ի անդամ «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի կողմից:

Դասընթացների շրջանակում վերապատրաստվել է 26 մասնակից:
Դասընթացների ընդհանուր տևողությունն էր 26 օր (85 ժամ):

26 անձ

Վերապատրաստման նյութերը կազմվել են՝ հիմնվելով միջազգայնորեն հաստատված լավագույն փորձի և ուղեցույցների, ինչպես նաև ապացուցահենք պրակտիկայի վրա, որը ԸԿՆԲԿ-ն և անդամ կազմակերպությունները ձեռք են բերել 10 տարիների ընթացքում՝ աշխատելով ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ:

Գնահատման արդյունքում պարզվել է, որ մասնակիցների գիտելիքներն աճել են 63%-ով՝ նպաստելով նրանց կարողությունների ամրապնդմանը և ընտանեկան բռնության և գենդերային բռնության դեպքերին առավել արդյունավետ, զգայուն և ֆեմինիստական մոտեցմամբ արձագանքելուն:



Հայտարարություններ, դիրքորոշումներ

2020 թ.-ին Կոալիցիան հրապարակել է արձագանքներ և դիրքորոշումներ կանանց հանդեպ բռնության և խտրականության դեպքերի առնչությամբ՝ դատապարտելով քաղաքական գործիչների կնատյաց գործելակերպը, կանանց հանդեպ բռնությունը նորմալիզացնող գովազդները, կին իրավապաշտպանների հանդեպ հարձակումներն ու ճնշումները:

ԸԿՆԲԿ-ն իր դիրքորոշումն է արտահայտել երկրում ընթացող առանցքային զարգացումների և հասարակական նշանակության խնդիրների առնչությամբ, ինչպես, օրինակ, Ամուլսարի հանքի շահագործման կանխարգելումը՝ շեշտելով հանքարդյունաբերությամբ կանանաց առողջությանը և բարեկեցությանը հասցվող վնասները:

Արցախյան պատերազմի ընթացքում ԸԿՆԲԿ-ն հանդես է եկել մի շարք հայտարարություններով՝ միջազգային հանրության և գործընկեր կառույցներին շրջանում՝ ահազանգելով Արցախի Հանրապետությունում ստեղծված մարդասիրական ճգնաժամի, միջազգային հանրության պասիվ դերակատարման և միջամտության բացակայության, ՄԱԿ-ի կանանց հարցերով հանձնաժողովի դերակատարման (անգլերեն), Ադրբեջանում գերության մեջ գտնվող Մարալ Նաջարյանի և այլ գերիների մասին:

Հանրային իրազեկում

Հանրային իրազեկման աշխատանքները՝ մեդիա նյութերի պատրաստման, հանրային արշավների և փողոցային ակցիաների կազմակերպման միջոցով, մշտապես Կոալիցիայի գործունեության առանցքում են: Կոալիցիան այս ուղղությամբ շարունակական աշխատանք է տանում՝ բարձրացնելով հասարակության իրազեկվածությունը ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության վերաբերյալ և փոխելով խնդրի շուրջ հասարակության ընկալումները:

2020 թ.-ին Կոալիցիայի հետ համատեղ ստեղծվել է առնվազն 484 մեդիա հրապարակում՝ ապահովելով առնվազն 500000 դիտում սոցիալական ցանցերում, ռադիոյում և հեռուստաալիքներում, իսկ հանրային արշավների և փողոցային ակցիաների միջոցով անմիջականորեն իրազեկել է առնվազն 100 անձի:

484 նյութ

500000 դիտում

100 անձ

Կոալիցիայի անդամ «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ն «Շանթ» հեռուստաընկերության հետ համատեղ մեկնարկել է «Զրույցներ կանանց իրավունքների մասին» խորագրով հեռուստածրագրերի շարքը: 2020 թ.-ի ընթացքում նկարահանվել է 11 հեռուստածրագիր[7]: Հեռուստածրագրերի շարքը մաս է «Կին իրավապաշտպանները քայլեր են ձեռնարկում գենդերային բռնության դեմ» 2020-2022 թթ. ծրագրի, որն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ: Որպես փորձագետ-խոսնակներ ներառվել են Կոալիցիայի անդամ կազմակերպություններից մասնագետներ, ՀՀ ոստիկանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Երևանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներ:



Հեռուստածրագրերի այս շարքի ընթացքում լուսաբանվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը, ինչպես նաև քննարկվել և ներկայացվել է գենդերային բռնության հիմնախնդիրը:

«Շանթ» հեռուստաընկերության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝

«Զրույցներ կանանց իրավունքների մասին» բոլոր հեռուստածրագրերի դիտողների թիվը միայն Երևանում 48 000 է, իսկ ՀՀ մարզերում՝130 000: Դիտումների ընդհանուր քանակը «Շանթի», «Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի և Կոալիցիայի յութուբյան ալիքներում գերազանցել է 32,696-ը:

7 Հեռուստածրագրերը հասանելի են «Շանթ» հեռուստաընկերության / https://bit.ly/3wauX8X /, Կանանց իրավունքների կենտրոնի / https://www.youtube.com/user/WRCArmenia/videos /, ինչպես նաև ԸԿՆԲԿ-ի / https://www.youtube.com/user/justiceforzaruhi/videos / յութուբյան ալիքներում:

Գենդերային բռնության դեմ պայքարի կառուցակարգերի զարգացմանն ու օրենսդրական մեխանիզմների արդյունավետության խթանմանն ուղղված աշխատանքներ

2020 թ.-ի ընթացքում Կոալիցիան իրականացրել է մի շարք կարևոր ադվոկացիոն և հետազոտական աշխատանքներ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի, Քվիննա թիլ Քվիննա հիմնադրամի և գործընկեր այլ կառույցների աջակցությամբ:

▷ Կազմվել է «ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԲԱՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» վերտառությամբ երկլեզու (հայերեն և անգլերեն) զեկույցը:

Հետազոտության հիմքում է «Կանանց աջակցման կենտրոն» և «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ների բազմամյա փորձն ու իրականացված աշխատանքները՝ ընտանեկան բռնության դեպքերի հետ աշխատանքի և բռնության արձագանքման շրջանակներում: ՀՀ օրենսդրական դաշտի և ԸԿՆԲԿ-ի անդամ այս երկու կազմակերպությունների փորձի համատեղ վերլուծությամբ ներկայացվում են դաշտում առկա խնդիրների և բացերի լուծմանն ուղղված առաջարկներ՝ հիմնված միջազգային չափանիշների և առաջադեմ փորձի վրա:

▷ Կազմվել է «ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ» վերտառությամբ երկլեզու (հայերեն և անգլերեն) զեկույցը:

Համառոտագիրը ամփոփ ներկայացնում է «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլյան կոնվենցիա) նպատակը, վավերացման հաջողված օրինակները, Հայաստանում Կոնվենցիայի շուրջ ստեղծված իրավիճակն ու հիմնավորումներ, թե ինչու պետք է վավերացնել այն:

▷ Կազմվել և ներկայացվել է ՄԱԿ-ի Կանանց հանդեպ բռնության հարցերով հատուկ հանձնակատարին ուղղված զեկույց՝ «ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՊ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ԾԱՅՐԱՀԵՂ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ» խորագրով (անգլերեն):

Տարվա ընթացքում ադվոկացիոն աշխատանքներն ուղղված են եղել ընտանեկան բռնության արձագանքման ներպետական օրենսդրության, քրեական և քաղաքացիական դատավարական օրենսդրությունների բարելավմանը:

Այս կապակցությամբ Կոալիցիայի իրավաբանը պատրաստել է իրավական վերանայումների փաթեթներ՝ ներկայացնելով 43 առաջարկ՝ ուղղված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հանրային քննարկման դրված նախագծերին և 26 առաջարկ՝ ուղղված Արդարադատության նախարարության կողմից հանրային քննարկման դրված նախագծերին:

Իրականացվել է 3 խորհրդատվական քննարկում ԸԿՆԲԿ-ի և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալի միջև ընտանեկան բռնության օրենսդրության խնդիրների առնչությամբ:

ԸԿՆԲԿ-ի անձնակազմը մասնակցել է ընտանեկան և գենդերային բռնության հիմնախնդրի շուրջ կոնֆերանսների և հանրային միջոցառումների՝ ՀՀ ոստիկանության, պատգամավորների, Արդարադատության նախարարության, փաստաբանների պալատի և ոլորտային այլ դերակատարների մասնակցությամբ:

Տարվա զարգացումներով և ճգնաժամերով պայմանավորված՝ պետության կողմից հասկանալիորեն չեն նախաձեռնվել նոր քաղաքականությունների ներդրման ծավալուն աշխատանքներ: Առանցքային զարգացում էր սակայն ՀՀ ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թթ.-ների գործողությունների ծրագրի ընդունումը: Ռազմավարական ծրագրի նախագծի[8] հանրային քննարկման փուլում Կոալիցիայի կողմից ներկայացված դիտարկումների ու առաջարկների մի մասն ընդունվել և արտացոլվել է ռազմավարության շրջանակներում:

ԸԿՆԲԿ-ի անդամ կառույցների կարողությունների զարգացմանն ուղղված քայլեր

[փետրվար]

Կոալիցիան իր 11 անդամ կազմակերպությունների և անձնակազմի հետ միասին ռազմավարական պլանավորման հանդիպում իրականացրեց Դիլիջան քաղաքում, որի ընթացքում մշակվեց 2020-2022 թթ.-ների մեր նոր Ռազմավարական ծրագիրը և 2020-2021 թթ.-ների համար գործողությունների պլանը և շահերի պաշտպանության ծրագիրը:

8 Նախագծին կարող եք ծանոթանալ այստեղ՝ https://www.e-draft.am/projects/2274:

Ռազմավարական պլանավորումից զատ՝ հանդիպումն առիթ էր՝ քննարկելու Կոալիցիայի և անդամ կազմակերպությունների աշխատակիցների առջև ծառացած դժվարություններն ու մարտահրավերները՝ պայմանավորված համավարակով, պատերազմով և անընդմեջ ի հայտ եկող արտակարգ իրավիճակներին արձագանքելու անհրաժեշտությամբ:

Այն կազմակերպությունները, որոնք ծառայություններ են մատուցում գենդերային բռնություն վերապրած անձանց, ՄԻԱՎ-ով ապրող կանանց և թմրանյութեր օգտագործող անձանց, տարվա մեկնարկից՝ Կովիդ-19-ով պայմանավորված արտակարգ իրավիճակում սկսեցին արտաժամյա աշխատել՝ թեժ գծերի ահազանգերի ավելացման, շահառուների թվի մեծացման և սրված իրավիճակի պատճառով, իսկ հոկտեմբեր ամսից պատերազմական պայմաններում արտաժամյա և գերլարված աշխատանքային ռեժիմով են գործել ԸԿՆԲԿ-ի ամբողջ անձնակազմն ու բոլոր անդամ կազմակերպությունները:

Ցավոք, 2020 թ.-ի ծանրաբեռնվածության, ֆիզիկական և հոգեբանական լարվածության պատճառով մեր գործընկերներից շատերը անխուսափելիորեն ունեցան հուզական այրման ու սպառվածության զգացողություն:

Ուստի հանդիպումը նշանակալից առիթ էր Կոալիցիայի՝ որպես թիմի ամրապնդման համար, հնարավորություն էր խոսելու ընդհանուր դժվարությունների, սթրեսի, հուզական այրման և ընթացիկ խնդիրները հաղթահարելու մեր կարողությունների մասին, ապահով միջավայրում զրուցելու ակտիվիզմի, կանանց իրավունքների և ֆեմինիստական գաղափարախոսությունների շուրջ:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՎ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

[հոկտեմբեր-դեկտեմբեր]

Համավարակին զուգահեռ՝ սեպտեմբերի 27-ից սկսած Հայաստանը հայտնվեց ադրբեջանական հարձակման թիրախում: 44 օր տևողությամբ պատերազմի պատճառով տեղահանվեց 90 000 մարդ՝ մեծամասամբ կանայք, երեխաներ և տարեցներ:

Պատերազմի ազդեցությունը կանանց վրա ահռելի է, հատկապես նրանց հոգեկան առողջության վրա:

Հարյուրավոր կանայք երեխաների հետ միասին Արցախից Հայաստան եկան՝ իրենց հետ չունենալով նվազագույն կենսական անհրաժեշտության պարագաներ, ստիպված լինելով փախչել անգամ գիշերային հագուստով և հողաթափերով:

ԸԿՆԲԿ-ն պատերազմական գործողությունների առաջին իսկ օրերից սկսեց իրականացնել արցախցիներին աջակցության հրատապ ծրագրեր: Այս նպատակով վերակազմակերպվեցին Կոալիցիայի առկա ծրագրերը, ներգրավվեցին նոր ֆինանսական միջոցներ:

Իրբև կանանց պաշտպանությամբ զբաղվող կառույցների հարթակ՝ ԸԿՆԲԿ-ն փորձել է անել առավելագույնս՝ ապահովելու կանանց ֆիզիկական անվտագնությունը և սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը: Ճգնաժամային արձագանքման շրջանակում կանանց տրամադրվել է հոգեբանական աջակցություն և խորհրդատվություն: Կոալիցիայի և անդամ կազմակերպությունների իրավաբանները նաև ակտիվորեն աջակցել են՝ կանանց տրամադրելով անվճար իրավական խորհրդատվություն:

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի աջակցությամբ ԸԿՆԲԿ-ն 3,257,408 դրամի հիգիենիկ փաթեթներ ու կանանց համար առաջին անհրաժեշտության պարագաներ (dignity kits) է գնել մոտ 650 ընտանիքի համար:

Փաթեթները բաժանվել են նաև մարզային գործընկերների միջոցով. Շիրակի մարզում մենք օգնություն ենք տրամադրել ԸԿՆԲԿ-ի անդամ «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոնի միջոցով, Գեղարքունիքի մարզում աշխատել ենք «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի հետ, իսկ Սյունիքի մարզում՝ «Սոսե» կանանց հիմնահարցեր ՀԿ-ի հետ:

Աջակցության այս փաթեթներն էական էին Հայաստան ժամանելուց անմիջապես հետո առնվազն առաջին մեկ ամսվա կտրվածքով՝ կանանց համար արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու համար:

Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ տարեվերջին (2020 թ.-ի դեկտեմբեր) հնարավոր դարձավ կանանց համար առաջին անհրաժեշտության փաթեթներ բաժանել ևս 103 տեղահանված կանանց, որոնք ժամանակավորապես բնակություն էին հաստատել Երևանում, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերում:

Արձագանքելով պատերազմով պայմանավորված հումանիտար ճգնաժամին՝ ԸԿՆԲԿ-ի ջանքերով և Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Քվիննա թիլ Քվիննա հիմնադրամի աջակցությամբ իրականացվել են հետևյալ հումանիտար աշխատանքները՝

- ▷ Ձևավորվել են հենակետային շտաբեր՝ «Կանանց աջակցման կենտրոն», «Կանանց ռեսուրսային կենտրոն» և «Իրական աշխարհ, իրական մարդիկ» կազմակերպությունների տարածքներում:
- ▷ Ընդհանուր առմամբ սոցիալական բազմաբնույթ աջակցություն է ցուցաբերվել 9437 ընտանիքի՝ տրամադրելով սնունդ, հիգիենայի պարագաներ, հագուստ և այլ անհրաժեշտ պարագաներ:
- ▷ Իրավական աջակցություն է ցուցաբերվել Արցախից Հայաստան տեղափոխված 102 կնոջ, իսկ հոգեբանական աջակցություն՝ 182 անձի:
- ▷ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ Շիրակի մարզում գործող ԸԿՆԲԿ-ի անդամ «Կանանց իրավունքների տուն» ՀԿ-ի կողմից իրականացվել են տեղահանված կանանց մասնագիտական վերապատրաստումներ:
- ▷ ԸԿՆԲԿ-ի մյուս անդամ՝ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից կազմակերպվել են «ապահով տարածքներ», որտեղ Արցախից տեղահանված կանայք և երեխաները կկարողանային վերականգնվել, շփվել, կիսել իրենց ապրումները, ստեղծել փոխօգնության ցանցեր: Այս նպատակով նախապես ընտրված երեք հյուրանոցներում հյուրընկալվել են Արցախից տեղահանված 450 կանայք և երեխաներ:

9437 ընտանիք

102 կին

182 անձ

450 կին և երեխա

2020 Թ.-Ի ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2020 թ.-ին ԸԿՆԲԿ-ն ամրապնդել է գենդերային բռնության դեմ պայքարը կարևորող դերակատարների հետ համագործակցությունը՝ տեղական և միջազգային մակարդակներում:

Համագործակցության կարևոր ուղղություններից էր կապը մարզային հասարակական կազմակերպությունների հետ:

ԸԿՆԲԿ-ի անդամ «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպությունը ենթադրամաշնորհային աջակցություն է տրամադրել մարզային 13 կազմակերպության՝ ՀՀ բոլոր մարզերից՝ ձևավորելով Կովիդ 19-ի պայմաններում գենդերային բռնությունից տուժած կանանց աջակցություն տրամադրող համակիր կառույցների ցանց՝ այսպիսով մարզային մակարդակում նպաստելով բռնության կանխարգելման ուղղությամբ աշխատանքներին, կազմակերպությունների միջև համագործակցություններին և ուղղորդումներին:

ԸԿՆԲԿ-ի համար, ինչպես և նախորդ տարիներին, առաջնահերթ է եղել աշխատանքը և համագործակցությունը պետական կառույցների հետ:

2020 թ.-ի շրջանակներում ինտենսիվ համագործակցություն և կապ է ապահովվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Արդարադատության նախարարության, Առողջապահության նախարարության, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ, ՀՀ ոստիկանության հետ և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ:

Տարվա կտրվածքով Կոալիցիան մասնակցել է առնվազն 12 ռազմավարական առցանց քննարկման որոշում կայացնողների հետ:

12 հանդիպում

Կոալիցիայի անձնակազմի անդամ Զարուհի Հովհաննիսյանը 2020 թ.-ի հունիսի 19-ին հրավիրվել է Հայաստանում մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ ՀՀ նախագահի հետ փակ հանդիպման, ինչը վկայում է այն մասին, որ ԸԿՆԲԿ-ի իրավապաշտպան գործունեությունը տեսանելի է և կարևորված:

Տեղական և միջազգային կազմակերպություններից Կոալիցիան սերտորեն համագործակցել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի Զարգացման հիմնադրամի, Քվինա թիլ Քվինա հիմնադրամի, Բաց հասարակություններ Հայաստան - հիմնադրամի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի

գրասենյակի, Մարդու իրավունքների տուն Երևանի և Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիայի, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի «Սոսե» կանանց հիմնահարցեր ՀԿ-ի հետ:

ԸԿՆԲԿ-ն արժևորում է միասնական պայքարի շուրջ համախմբումը և շնորհակալ է գործընկեր կազմակերպություններին այս դժվարին տարվա ընթացքում համագործակցության և փոխօգնության համար:

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Հաշվետվության հեղինակ՝ Անահիտ Սիմոնյան

Հաշվետվությունը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա, 2021 թ.

www.coalitionagainstviolence.org